Արձանագրություն N 3

«ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Մհեր Մկրտչյան և Չարենցի փողոցների հենապատերի վերակառուցման աշխատանքներ»-ի ձեռքբերման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր

15 օգոստոս 2023թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ռ.Եղիազարյան- համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
անդամներ՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի պետ Արա Մեսրոպյան,
համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Հայկ Բաբայան,
աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձանակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության հարցերով կազմակերպիչ/ Սամվել Ալոյան,
համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության,հողաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Սամվել Գրիգորյան:
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ **«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ»ՍՊԸ-ի և «Սուսմետ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և սահմանված կարգով շտկվել են ***«ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1»*** ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **«ՖՈՒԼԼ-ՇԻՆ» ՍՊԸ-ի, «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի և «Սուսմետ» ՍՊԸ-ի** հայտերը գնահատել՝ **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ ***«ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1»*** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել՝ **«ՖՈՒԼԼ-ՇԻՆ» ՍՊԸ**-ն՝ որպես հրավերի պահանջները բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է <<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի /10 օրացուցային օր/ ավարտին հաջորդող 4-րդ աշխատանքային օրը ծանուցումն ուղարկվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Անգործության ժամկետի ավարտից հետո՝ պայմանագրի կնքման նպատակով, ընթացակարգի ընտրված/հաղթող/ մասնակցին ծանուցել՝ ներկայացնելով կնքվելիք պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում** ներկայացնել **պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 տոկոսի չափով: Պայմանագրի**

և որակավորման ապահովումները ներկայացվում են՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Պայմանագիրը կնքելուց հետո,համայնքի մասնաբաժնի չափով ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում, ընտրված մասնակցի հետ համաձայնագիր կկնքվի,եթե տուժանքի ձևով ներկայացված ապահովումները փոխարինվեն բանկային երաշխիքով կամ կանխիկի փողի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Գնահատող հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	Ստորագրությունը
Նախագահ՝ Ոսկան Եղիազարյան	
Անդամներ՝ Արա Մեսրոպյան	
Սամվել Ալոյան	
Հայկ Բաբայան	
Սամվել Գրիգորյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	